

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2013 թվականի օգոստոսի 30-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2014 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին:
2. 2013 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի լուծարային շրջանի աշխատանքների կազմակերպման մասին:
3. 2013 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերում սովորող ուսանողների սուգարքների և քննությունների կազմակերպման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2014 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների հարցը /զեկուցող՝ Ն. Ա. Կուստուզյան/:

Քննարկվեցին բարելավված ուսումնական պլանները:

Որոշեցին – Մասնագիտությունների բարելավված ուսումնական պլանները ներկայացնել դասախոսների և արտաքին փորձագետների քննարկմանը:

Քննարկվեց սոցիալապես անապահով ընտանիքների երեխա-ուսանողների հարցը:

Որոշեցին – Կազմել այն ուսանողների ցանկը, որոնք օգտվում են սոցիալական անապահովության «Փարոս» համակարգից:

Լսեցին- 2013 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի լուծարային շրջանի աշխատանքների կազմակերպման հարցը / զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/

Նշվեց, որ դասախոսների հետ համաձայնեցվել և կազմվել է լուծարային շրջանի ժամանակացույցը, և քննությունները պետք է կազմակերպել ըստ ժամանակացույցի: Լուծարային շրջանը մեկնարկվելու է սեպտեմբերի 8-ից:

Լսեցին-2013 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերում սովորող ուսանողների սուգարքների և քննությունների կազմակերպման հարցը /զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/

Նշվեց, որ դասախոսների հետ համաձայնեցվել և կազմվել է ստուգարքների և քննությունների ժամանակացույցը, և ստուգարքները պետք է կազմակերպել սեպտեմբերի 6-15-ը, իսկ քննությունները՝ սեպտեմբերի 17-ից հոկտեմբերի 5-ը՝ ըստ ժամանակացույցի:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Վ. Դ. Խաչատրյան